

ԻԻԱՆ ԻԼՅԻՆ

ՈՌԻՍԵՐԵՆԻ ՈՒՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Խօսք քարգմանչի

Ռուս անուանի կրօնական փիլիսոփայ, իրաւաբան, հրապարակախօս Ի. Իլյինն իր «Մեր խնդիրները: Ռուսիոյ պատմական նակատագիրն ու ապագան»¹ յօդուածում անդրադառնում է առաջին հայեացքից զուտ բանասիրական մի խնդրի՝ նոր ուղղագրութեանը, որի մի շարք «բարեփոխումներ» նախ կեանքի էր կոչել ժամանակատուր կառավարութիւնը՝ 1917 թ., ապա 1918 թ.՝ բոլշեւիկներն էին շարունակել գործը բազմադարեայ այբուբենից մի քանի տառ դուրս մղելով:

Հեղինակը հանգամանալից՝ փաստացի հարուստ նիւթի՝ բազմաթիւ օրինակների հիմամբ, ցոյց է տալիս նոր ուղղագրութեան, որն, ի դէպ, խեղագրութիւն է անուանում, անթիւ-անհամար խութերը, անտրամաբանականութիւնն ու անյարմարութիւնը, ապա յօդուածի վերջում հարց բարձրացնում դրա կեանքի կոչման բուն նպատակի վերաբերեալ: Պատասխանը մէկն է՝ քաղաքական-յեղափոխական նկատառումը՝ հատել Ռուսիոյ հոգեւոր արմատներից եւս մէկը: Մեծ մտածողի գիտական փաստարկներն ու տրամաբանական հիմնատրումները ի սպառ վերացնում են «հին» եւ «նոր» ուղղագրութիւնների վերաբերեալ բանավեճի անհրաժեշտութիւնը՝ կատարելապէս համոզելով, որ «նորը» միայն խեղագրութիւն եզրով է բնորոշելի: Առաւել ուշագրաւ է, որ հեղինակի եզրափակիչ միտքը լիովին հասցեագրելի է նաեւ մեզանում առկայ բազմաթիւ մարտնչողների. «Թող ազգային ուղղագրութեան խափանողները առյաւելոյ կնքուեն «անգրագիտութեան բարեկամներ» կամ «քառսի գինակիրներ» մականուամբ եւ թող լուսատրութեան ազգային նախարարի առաջին գործողութիւնը ազգային ուղղագրութեան վերականգնումը լինի»:

¹ И. А. Ильинъ, О русскомъ національномъ правописаніи, «Наши задачи», т. II. Парижъ, 1956.

ՌՈՒՍԵՐԷՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ռուս ժողովուրդն իր համար մի զարմանահրաշ գործիք է կերտել՝ մտքի գործիք, հոգեղէն եւ հոգեւոր արտայայտութեան գործիք, բանաւոր եւ գրաւոր հաղորդակցութեան գործիք, գրականութեան, քնարերգութեան եւ թատրոնի գործիք, իրաւունքի եւ պետականութեան գործիք, եւ դա մեր հրաշք, զօրեղ ու խորիմաստ ոռոսաց լեզուն է: Նա ընկալում է ամենայն օտար լեզու եւ նրանով արտայայտում, սակայն իրեն ի վիճակի չէ ընկալելու եւ արտայայտելու նրանցից եւ ոչ մէկը: Նա անըստգիւտ կարտայայտի էլ դիւրինը, էլ խորախորհուրդը, էլ առտնինը, էլ կրօնական ճախրանքը, էլ խորին վհատութիւնը, էլ ինքնամոռաց ուրախութիւնը, էլ լակոնիկ դրոշմատիպը, էլ տեսանելի մանրութիւնը, էլ անճառելի երաժշտութիւնը, էլ խայթիչ հեգնանքը, էլ քնքուշ քնարական երազանքը:

Ահա թէ ինչ է նրա մասին գրել Գոգոլը. «Ապշում ես մեր լեզուի նուիրականութիւնից. ինչ ձայն էլ որ հնչեցնի, տեղով մէկ պարգեւ է. ամեն ինչ արտայայտիչ է, մարգարիտի նման խոշոր, եւ յիրաւի, բառը նրանով արտայայտուող առարկայից էլ արժէքաւոր է».... Աւելին. «Ինքը՝ մեր արտասովոր լեզուն, դեռ գաղտնիք էլ է.... Մի լեզու, որ ինքնին արդէն իսկ քերթող է».... Մի առիթով նրա մասին Տուրգենեւը բացականչել է. «Տարակուսանքի օրերին՝ իմ հայրենիքի ճակատագրի շուրջ ծանր խոհերի օրերին, դու իմ միակ զօրավիզն ու նեցուկն էիր, ո՛վ մեծ, զօրեղ, շիտակ եւ ազատ ոռոսաց լեզու: Անկարելի է հաւատալ, որ այսպիսի լեզուն ի սէր մեծ ժողովրդի չէ շնորհուել»:

Մինչդեռ նոր սերունդն այն չպահպանեց.... Եւ ոչ միայն նրանով, որ այն խճողեց չլսուած, այլանդակ, «խուլուհամր» (ըստ Շմելեովի արտայայտութեան), անիմաստ բառերով՝ յեղափոխական մնացորդներից եւ քռթիկներից² կցմցուած, այլ մանաւանդ այնու, որ բզկտեց, այլանդակեց եւ աղճատեց նրա գրաւոր պատկերը: Եւ այս՝ լեզուի համար աղաւաղող, իմաստասպան, աւերիչ գրութեան կերպը հռչակեց իբրեւ «նոր ուղղագրութիւն»: Այնինչ իրականում սոյն անգրագէտ եղանակը խաթարում է իւրաքանչիւր լեզուի ամենահիմնական օրէնքները: Սրանք «յետադիմական» մարդու սին բողոքներ չեն, ինչպէս պնդում են որոշ

² Քոթիկ — մաշուած օճառի կտորտանք, խրուսկ: Աստ եւ այսուհետ բոլոր ծանօթագրութիւնները թարգմանչինն են:

անուս վտարանդիներ, այլ բացարձակ ճշմարտութիւն՝ տրամաբանական ապացուցման ենթակայ:

* * *

Ամենայն լեզու ոչ թէ պարզ, այլ բարդ երեւոյթ է, սակայն լեզուի սոյն բարդութեան մէջ ամեն ինչ փոխկապակցուած է ու փոխալսմանաւորուած, ամեն ինչ ի մի է ձուլուած, ամեն ինչ՝ հիւլէներով սերտաճած: Այսպէս եւ ամեն մի ժողովուրդ կրում է այն՝ հետամուտ մի բնագոյնի նպատակի, այն է՝ ստոյգ արտայայտել եւ ճիշտ հասկանալ արտայայտուածը: Մինչդեռ յեղափոխական խեղազրութիւնը ոչ միայն չի հետեւում այս նպատակին, այլեւ բիրտ կերպով եւ ըստ ամենայնի՝ յանդգնօրէն ոտնահարում է:

Լեզուն նախ եւ առաջ հնչիւնների կենդանի ակունք է՝ կոկորդով, բերանով, ունգերով արտաբերուող եւ ականջով լսուող: Լեզուի սոյն ձայնական-լսողական կազմն բնորոշէնք «հնչոյթ» բառով:

Ի տարբերութիւն կենդանիների արձակած ձայների՝ սրանք յօդաբաշխ են. երբեմն, ինչպէս ուսերէնում, ֆրանսերէնում եւ իտալերէնում, յատակ են ու պարզորոշ, երբեմն, ինչպէս անգլերէնում, այդպիսին չեն, այլ ձոյլ են եւ տարտամ: Այս յօդաբաշխութիւնը ենթակայ է յատուկ քերականական օրէնքների. նա տարբերում է հնչիւնները (ձայնաւորներ եւ բաղաձայններ), վանկերն ու բառերը, իսկ բառերում՝ արմատներն ու նրանց կցուածները (նախածանցներն արմատից առաջ, վերջածանցներն արմատից յետոյ). նա տարբերում է նաեւ սեռ ու թիւ, հոլովում (հոլովներ) եւ խոնարհում (բայերի դէպքում՝ դէմք, թիւ, ժամանակ, եղանակ), ապա զանազանում խօսքի մասերը (գոյական անուն, ածական, դերանուն, բայ եւ այլն, իսկ բառերի իմաստային յարաբերութեան առումով՝ նախադասութեան անդամներ՝ (ենթակայ, ստորոգեալ, որոշիչ, խնդիր, պարագայ եւ այլն): Սրանք՝ բոլորը միասին, լեզուի ձեւերի մասին ուսմունք են կազմում, ուստի կարող են կոչուել «ձեւոյթներ»:

Ինքնին հասկանալի է, որ եւ հնչոյթը, եւ ձեւոյթը ծառայում են իմաստին, որը նրանք ջանում են անսխալ եւ ստոյգ արտայայտել եւ որով նրանք ներքուստ յագեցած են: Անիմաստ հնչիւնները խօսք չեն կազմում: Անիմաստ ածանցները, հոլովները, խոնարհումները, դերանունները, բայերն ու նախդիրները, խնդիրները ո՛չ խօսք են կազմում, ո՛չ գրականութիւն: Աստ ամեն ինչ ապրում է իմաստի համար, յանուն նրա, որ ստոյգ ցոյց

տայ ասելիքը, անըստգիւտ այն արտայայտի եւ ճիշտ հասկացուի: Նոյնիսկ մարդու հեծեծանքն ու հառաչանքը զուր եւ անիմաստ չեն: Բայց եթէ նրա է՛ հեծեծանքը, է՛ հոգոց հանելը լի են արտայայտչականութեամբ, եթէ դրանք նրա ներքին կեանքի նշաններն են, ապա որքան յագեցած կը լինի նրա յօդաբաշխ խօսքը՝ անունանող, նկատի ունեցող, մատնանշող, մտածող, ընդհանրացնող, ապացուցող, պատմող, բացականչող, զգացող եւ երեւակայող խօսքը՝ լի կենսականօրէն նուիրականի եւ պատասխանատուի կենդանի իմաստով: Ամբողջովին այս իմաստին է ծառայում լեզուն, այսինքն՝ նրան, ինչ կամենում է ասել եւ հաղորդել, եւ ինչը մենք կանուանենք «սեմեմա»³: Հէնց դա էլ ամենից կարեւորն է լեզուն: Նրանով է ամեն ինչ որոշւում: Վերցնենք, թէկուզ, հոլովները, դրանցից իւրաքանչիւրն ուրոյն իմաստ ունի եւ առարկայի մասին իրեն բնորոշ ինչ-որ բան է յայտնում: Ուղղական հոլով. առարկան դիտարկւում է ինքնին վերցուած՝ շաւղնշուելով այլ առարկաների հետ, սեռական հոլով. արտայայտում է մի առարկայի պատկանելութիւնը մէկ ուրիշի, տրականը մօտեցող գործողութիւն է ցոյց տալիս, հայցականը կիրառւում է այն առարկայի առնչուութեամբ, որին ուղղուած է գործողութիւնը, գործիական հոլովով արտայայտւում է գործողութեան կատարման միջոցը, նախդրիւ (նախդրական) հոլովը ցոյց է տալիս գործողութեան պարագաներն ու ուղղութիւնը: Այսպիսով՝ ամեն ինչ կատարւում է բովանդակ քերականութեան միջոցով...

Եւ վերջապէս՝ հնչոյթին եւ ձեւոյթին միանում է գրութիւնը. բառերը կարող են ոչ միայն հնչիւնաբանօրէն արտաբերուել, այլեւ տառերով գծագրուել. այդժամ դրանք արտաբերողը կարող է բացակայել, իսկ նրա խօսքը, եթէ, ի հարկէ, այն ստուգ է գրի առնուած, կարող է կարդացուել, հնչիւնաբանօրէն վերարտադրուել եւ ճիշտ հասկացուել այդ լեզուին տիրապետող հասարակութեան կողմից: Հէնց այսպէս է առաջանում ուղղագրութեան հարցը: Իսկ ո՞ր «գրութիւնն» է կարելի ճիշտ եւ անըստգիւտ համարել:

Պատասխանենք՝ այն, որը ոչ միայն ճշգրիտ վերարտադրում է իմաստով յագեցած հնչոյթը, այլեւ նախ եւ առաջ եւ ամենից շատ՝ ձեւոյթը: Եւ սխալ ու խեղ կ'համարուի այն «գրութիւնը», որը չի համապատասխանի ո՛չ հնչոյթին, ո՛չ ձեւոյթին: Եւ հէնց սա է յեղափոխական խեղագրութեան

³ Ըստ «Հայրենագիտական բառարանի»՝ նկարագրական լեզուաբանութեան մէջ իմաստային նուագագոյն միաւորը կոչւում է իմաստոյթ (սեմա, ձեւոյթայինը՝ սեմեմա):

մեղքը. այն վերացնում է առանձին տառեր՝ այդու աղաւաղելով իմաստն ու շփոթութեան մատնելով ընթերցողին. նա վերացնում է դերանունների եւ ածականների (յոգնակի թուի) մէջ առկայ տարբերութիւններն արական եւ իգական սեռերի միջեւ եւ այդու դժուարացնում բնագրի ճշգրիտ ընկալումը. նա իմաստազրկում է ածականների համեմատական աստիճաններն ու այդու լուրջ թիւրիմացութիւնների տեղիք տալիս ընթերցելիս եւ այլն, եւ այլն:

Այս ամենում համոզուենք իրական օրինակների միջոցով:

Առհասարակ մէն մի տառը կարող է լիովին փոխել բառի նշանակութիւնը: Օրինակ՝ «не всякій совершенный (т. е. сдѣланный) поступокъ есть совершенный (т. е. безупречный) поступокъ» (ամեն կատարած (այսինքն՝ գործած) արարք է, որ կատարեալ (այսինքն՝ անբիծ) է): Վերացրէք այս տառային տարբերութիւնը, այսինքն՝ երկու դէպքում էլ դրէք «е» կամ «о», եւ դուք կորցրած կլինէք սոյն ասոյթի բարոյական խորին իմաստը: Նա ասաց. «Что будетъ (т. е. придетъ), да вот что-то не будитъ (т. е. не прерывает мой сонъ)» (Նա ասաց, որ կլինի (այսինքն՝ կգայ), բայց ինչ-որ բան ինձ չի արթնացնում (այսինքն՝ չի ընդհատում քունս): Նոյնանման նշանակութեամբ է օժտուած նաեւ շեշտը. դրա տեղափոխումն արմատապէս շրջում է բառի իմաստը. «Ты дорога́ мнѣ большая доро́га» (Դու թանկ ես ինձ համար, մեծ ճանապարհ): Այսպէս, ուրեմն, լեզուի բովանդակ հիւստածքը չափազանց դիրազգաց է եւ օժտուած իմաստային վիթխարի նշանակութեամբ:

Սա յատկապէս պարզ երեւում է համանուն բառերի պարագայում. սրանք տարբեր իմաստներով օժտուած նոյն հնչիւնական կազմ ունեցող բառեր են: Աստ փրկութիւնը սոսկ մէկն է. անհրաժեշտ է տարբեր (տարբերակուած) գրութիւն: Սա բոլոր լեզուներին բնորոշ օրէնք է: Եւ որքան շատ են լեզուի մէջ համանուն բառերը, այնքան կարեւորում է ստոյգ գրութեան պահպանումը: Այսպէս՝ ֆրանսերէն «վէլ» բառը նշանակում է նիւնու (ver), բանատող (vers), ապակէ բաժակ (verre), կանաչ գոյն (vert), նաեւ նախդիր է՝ դէպի, մօտ, մօտաւորապէս նշանակութեամբ (vers): Փորձէք պարզեցնել այս ալլաբրութիւնը, եւ դուք լեզուի մէջ յիմար խառնաշփոթ կներմուծէք: Մէլ» բառը ֆրանսիացու համար հետեւեալ նշանակութիւններն ունի՝ ծով (mer), մայր (mère) եւ քաղաքապետ (maire), իսկ «ֆէլ» բառը՝ անել (faire), յարդարում, վարպետութիւն (faire), երկաթ (fer), նաեւ փոքրիկ ունեղի ապակու համար (ferre): «Վուա» բառը նշանակում է՝

ձայն (voix), ուղի (voie), բեռնուած սայլ (voie), ես տեսնում եմ (vois), տես (vois): «Կող» բառը նշանակում է մարմին (corps), կոշտուկ (cor), վոլտոննա՝ պղնձեայ փողաւոր նուագարան կամ եղջիւր (cor): Այստեղից պարզ ի պարզոյ երեւում է, որ բառերի ալլագրութիւնը փրկում է լեզուն անհեթեթութիւնից, իսկ դրա բացակայութեան դէպքում անհեթեթութիւնն արդէն իսկ դռան շեմին է յայտնւում: Նման օրինակներ կան նաեւ գերմաներէնում: Մալեն» բառով գերմանացին ուզում է ասել նկարել, երեւակայել (malen) եւ մուրն (mahlen): Սակայն անդ, ուր գծագրութիւնը չի փոխւում, թիրիմացութեան վտանգ կայ. «sein»-ը նշանակում է լինել եւ նրանք (նման է), «sie»-ն նշանակում է եւ դուք, եւ իգական սեռի՝ 3-րդ դէմքի դերանուն՝ նէ, եւ թիրիմացութիւններին, որոնք կարող են առաջանալ այս խառնաշփոթից, վերջ չի լինի: Գերմաներէն «Schauer» բառը բացարձակապէս միանման գծագրութեան պարագայում հինգ տարբեր նշանակութիւն ունի՝ նաւահանգստի բանուոր, հայեցող, վախ, անսպասելի տարափ եւ ծածկ: Սա իսկական օրինակն է այն բանի՝ ինչպէս գրութիւնն ու հնչիւնը կարող են յետ ընկնել իմաստից, ինչը նշանակում է, որ լեզուն չի կարողանում լուծել իր առջեւ ծառացած խնդիրը:

Իսկ ռուսերէնը, ահա, իր հին ուղղագրութեամբ յաղթականօրէն գլուխ էր հանում իր «համանուն» բառերից՝ նրանց համար զանազան գրելաձեւեր մշակելով: Յեղափոխական խեղագրութիւնը, սակայն, ոչնչացրեց բոլոր սերունդների այս արժէքաւոր լեզուական աշխատանքը. նա ամեն ինչ արեց, որ ռուսաց լեզուի մէջ հնարաւորինս շատ անմտութիւններ եւ անհեթեթութիւններ սողոսկեն: Եւ ռուս ժողովուրդը չի կարող եւ չպիտի հաշտուի այս բարբարոսական պարզեցման ներխուժման հետ:

Նոր «ուղղագրութիւնը» լուծարեց «і» տառը⁴: Հետեւանքը եղաւ այն, որ անհետացաւ «мір» (աշխարհ) եւ «мир» (խաղաղութիւն, ամիւրոք, պատերազմի բացակայութիւն) բառերի միջեւ առկայ տարբերութիւնը. դրա հետ միասին վերացաւ նաեւ «իժիցա»-ն⁵, ինչի հետեւանքով ռուս ուղղագրութեանը մեռնոով օծութեան (міро-помазаніе) փոխարէն պիտի օծուէին աշխարհով կամ խաղաղութեամբ (ինչը միանգամայն անիրականանալի բան է):

⁴ 35 տառից բաղկացած նախալեզափոխական ալբուբենի 10-րդ տառը՝ այս «і»-ն, հնչւնաբանօրէն լրիւ համապատասխանում է ռուսերէնի ներկայիս «и» եւ հայերէնի «ի» տառին:

⁵ Նախալեզափոխական գլագոլիցայի, ապա փոփոխուած եւ կիրիլիցա վերանուանուած ալբուբենի վերջին տառը՝ «իժիցա»-ն (ѣ), դարձեալ համահունչ է ռուսերէն «и» տառին, որը բացառապէս գործածւում էր յունարէնից փոխառած սակաւթիւ բառերում:

Այնուհետեւ նոր ուղղագրութիւնը չեղեալ յայտարարեց «Ֆ» տառը⁶, եւ այդ անմտութիւնը մի աւերիչ մորիկի պէս պատուհասեց ռուսաց լեզուն եւ ռուս գրականութիւնը: Անթիւ-անհամար համանուն բառերի նշանագծագրական տեսքը դարձաւ անզանազանելի, եւ գէթ մէկ անգամ այս երեւոյթը տեսնողն ու հասկացողը սարսափահար կլինեն ռուս գրականութիւնն ու ռուս մշակոյթը հեղեղած այդ տգիտութեան տեսարանից եւ երբէք չեն հաշտուի այս յեղափոխական խեղագրութեան հետ (տե՛ս «Наши задачи», Թիւ 167):

Մենք զանազանում ենք «самъ»⁷ (собственнолично) եւ «самый» (точно указанный, тождественный)⁸: «Самъ» բառի սեռականն է «самого», հայցականը նոյնպէս՝ «самого»: Այսպէս է նաեւ «самый» բառի պարագայում: «Ես տեսայ անձամբ իրեն, բայց ինձ թուաց, որ տեսնում եմ ոչ հէնց իրեն»... (նամակ ժամանակակից Հարաւսլաւիայից): Խեղագրութեան մէջ այս տարբերութիւնը յօդս է ցնդում. նա հոլովման սոսկ մի ձեւ գիտի, այն է՝ «самого»՝ իրեն...:

Այսպէս ենք հոլովում իգական սեռի անձնական դերանուն երրորդ դէմքը՝ «она»՝ նա, «ея»՝ նրա, «ей»՝ նրան, «ее»՝ նրան, «ею»՝ նրանով, «о ней»՝ նրա մասին: Իսկ խեղագրութիւնը տարբերութիւն չի դնում այս բոլոր հոլովների մէջ. սեռական եւ հայցական հոլովաձեւերը նոյնական են գրութեամբ՝ «ея»: «Кто же растопталъ намъ въ саду наши чудесные клумбы? Это сдѣлала ее коза» («ея»-ի՝ նրա-ի փոխարէն, այսինքն՝ հարեւանի այծը. անհեթեթութիւն: «Я люблю ее собаку!» (Ես սիրում էի նրա շանը): Արդեօք սա չի՞ նշանակում, որ այդ կինը բարքով նման էր շանը, բայց ես, այնուամենայնիւ, չէի կարող հիասթափուել նրանից. ինչ ողբերգական սիրային արկած է... կամ էլ դա կարող է նշանակել, որ ես հաճոյքով խաղում էի նրա շնիկի հետ... Այդ դէպքում հարկ է գրել «ея»՝ նրա, այլ ոչ թէ «ее»՝ նրան: «Кто ввелъ у нас это бессмысленное правописание? это сдѣлала ее партія» (Ո՞վ է այս անհեթեթ ուղղագրութիւնը ներդրել մեզանում: Դա արել է իր իսկ կուսակցութիւնը) («նրա»-ի փոխարէն, այսինքն՝ յեղափոխութեան կուսակցութիւնը): Ի՞նչ է նշանակում հետեւեալ արտայայ-

⁶ Այս տառը՝ «ЯТЬ»-ը (եաժ), բառակցքում հնչում է ռուսերէնի «Е» եւ հայերէնի «Ե»-ին համահունչ, իսկ բառամիջում եւ բառի վերջում՝ ռուսերէն «Э» եւ հայերէն «Է»:

⁷ Сам — 1. Ինքը, ինքս, ինքդ: 2. Անձամբ, ոչ այլ ոք, քան ինքը, նոյն ինքը:

⁸ Самый — 1. Գործածում է այս, այդ, այն դերանունները ճշտելու նպատակով՝ հէնց, ինքը, նոյնը (օր.՝ հէնց այդ նոյն տեղում): 2. Նաեւ տեղն ու ժամանակը ճշտելու համար՝ իսկը, բոլորովին, հէնց, ուղիղ, բուն, (օր.՝ у самого моря՝ ուղիղ ծովի մօտ): 3. Ինքնին:

տուժիւնը՝ «Что ее вещи?» («Սա նրա՞ իրերն են»)⁹։ Ոչինչ։ Անհմաստութիւն։ «Надо видѣть разумность мира и предстоять ее Творцу»... (Պէտք է տեսնել իմաստութիւնն աշխարհի, եւ յառնել նրա Արարչի առջեւ)։... Ինչ է դա նշանակում։ Ոչինչ. գրոյթի բովանդակ իմաստն աղաւաղուած է անհեթեթութեամբ։ Պէտք է լինի՝ Աշխարհն իմաստութեամբ է արարուած, եւ [խոնարհաբար] կանգնել նրա Արարչի առջեւ։

Նոր խեղագրութիւնը տարբերութիւն չի դնում արական եւ իգական սեռերի ածականների (յոգնակի թուի) եւ դերանունների վերջաւորութիւնների միջեւ։ Ահա ստեղծուող անհեթեթութեան երկու նմուշ։ Մի գիտական մենագրութեան մէջ կարդում ենք. «Въ исторіи существовали разные математики, физики, и механики» (տեսութիւններ, թէ՛ մարդիկ)։ դրանցից մի քանիսը մեծ համբաւ էին վայելում, բայց շատ մոլորութիւններ կեանքի կոչեցին»... Ընթերցողն այդպէս էլ մինչեւ վերջ չի հասկանում, թէ ինչ է, բառիս բուն իմաստով, նկատի առնւում՝ տարբեր գիտութիւնները, թէ՛ տարբեր գիտնականները... Ա. Ֆ. Տիւտչեւայի օրագրում կարդում ենք. «Я всегда находила мужчинъ гораздо менѣе внушительными и странными, чѣмъ женщинъ»: «Они» («նրանք»⁹, ովքեր՝ տղամարդիկ, թէ՛ կանայք) болѣе доброжелательны»... «Ես միշտ համարել եմ, որ տղամարդիկ նուազ ազդեցիկ ու տարօրինակ են, քան կանայք. «նրանք»¹⁰ (ովքեր՝ տղամարդիկ, թէ՛ կանայք) աւելի բարեացակամ են»...

Ընթերցողը երեք բոլորէ գլուխ է շարդում, թէ ո՞վ է նուազ բարեացակամ, ո՞վ՝ առաւել։ Եւ լաւ չհասկանալով՝ փորձում է շարունակել ընթերցանութիւնը։ «Мужчины, просящіе на улицахъ милостыню, суть «нищіе»; а женщины? Онѣ не нищія; они тоже «нищія»»... (Փողոցներում ողորմութիւն խնդրող տղամարդիկ «ընչազուրկ» են, իսկ «կանայք»։ Նրանք ընչազուրկ չեն. նրանք նոյնպէս ընչազուրկ են)։

Սա նշանակում է՝ հոլովների եւ սեռերի քերականական ու իմաստային տարբերութիւնը պահպանւում է, իսկ այս տարբերութիւնների ուղղագրական արտայայտութիւնը՝ խափանւում։ Սա հաւասարազօր է հոլովների, ենթակաների եւ ուղիղ խնդիրների, տղամարդկանց եւ կանանց խառնաշփոթութեան... Ահա այսպէս են սերմանւում թիրիմացութիւնները, փոխադարձ թիրումբոնողութիւնները, անհեթեթութիւնները. այսպէս

⁹ Նրանք՝ արականով՝ они, իգականով՝ онѣ։

¹⁰ Նրանք՝ արականով՝ они, իգականով՝ онѣ։

է բազմապատկուում եւ զօրանում մտքի շփոթը: Ինչո՞ւ: Ո՞ւմ է դա հարկաւոր: Ռուսաստանի՞ն: Ո՛չ, երբէք. դա հարկաւոր է, անհրաժեշտ է ու կարեւոր համաշխարհային յեղափոխութեան համար:

Հանգամանօրէն եւ ակնառու անդրադառնանք այն իմաստային խոցերի թուարկմանը, որ ռուս գրականութեանը հասցրեց «նոր ուղղագրութիւնը»: Աստ ամենն սպառել հնարաւոր չէ, բայց ինչ-ինչ էական օրինակներ հարկ է բերել:

Մեր ուղղագրական խոց ու խոյրերի մասին

Եթէ մի կողմ թողնենք բազմաթիւ այլ անհեթեթութիւններ՝ այսպէս կոչուած «նոր ուղղագրութեամբ» ներմուծուած, եւ կենտրոնանանք սոսկ նրանց վրայ, որոնք ռուս մշակոյթի մէջ խցկուեցին «Ֆ» տառի կամայական լուծարմամբ, ապա կտեսնենք հետեւեալ պատկերը: Ահա այդ այլանդակութեան մի քանի օրինակներ:

1. Իմաստը. Սննդառութեան մէջ համատարած անժուժկալութեան պատճառով մեր պաշարներն սպառուեցին:

Ուղղագրութիւն. «Всѣ ѣли да ѣли, вотъ все и вышло» (Բոլորն անվերջ ուտում ու ուտում էին, եւ այսպէս ամեն ինչ սպառուեց):

Խեղագրութիւն. «Все ели да ели, вотъ все и вышло» (Ամեն ինչ ուտում ու ուտում էին, եւ այսպէս ամեն ինչ սպառուեց) (всѣ՝ բոլորը, все՝ ամեն ինչ):

2. Իմաստը. Կաւիճի փոշին աղբի պէս սփռուած մնաց սենեակում. երկար աւլեցի:

Ուղղագրութիւն. «Осѣлъ мѣлъ пылью на полу; я долго мелъ просыпанный мѣлъ» (Կաւիճը փոշու պէս նստեց յատակին. ես երկար աւլում էի այդ կաւճափոշին):

Խեղագրութիւն. «Осел мел пылью на полу; я долго мел просыпанный мел»: Յիմարութիւն. մենք երկուսով էինք աւլում՝ նախ էշը, ապա ես, իսկ յանուն ինչի էինք այդպէս շարշարւում, անյայտ է. աղբի աղբիւրը նշուած չէ:

3. Իմաստը. Ամառը տաք էր, իսկ թռիչքները՝ հաճելի:

Ուղղագրութիւն. «Теплымъ лѣтомъ я наслаждался пріятнымъ летом»:

Խեղագրութիւն. «Теплым летом я наслаждался приятным летом»: Անհեթեթութիւն. Անյայտ է, թէ երբ էին կատարւում թռիչքները, ինձ, սակայն, հաճելի էր ջերմութիւնը:

4. Հեռագրի իմաստը. «Я раненъ, рану залѣчиваю, прибуду на аэропланѣ» (Նա վիրավոր եմ, բուժում եմ վերքս, կժամանեմ օդանավով՝ սալառնակով):
Ուղղագրութիւն. «Лѣчу рану лечу» (Բուժում եմ վերքս, թռչում):
Խեղագրութիւն. «Лечу рану лечу» (Բուժում եմ վերքս ու բուժում):
Անհեթեթութիւն. Հասցէատէրը չգիտէր՝ ինչ մտածէր:

5. Հեռագրի իմաստը. «Продовольствіе найдено, везу его съ собою» (Պարէնամթերքը յայտնաբերուած է, բերում եմ հետս):
Ուղղագրութիւն. «Еду везу ѣду» (Գալիս եմ, բերում եմ ուտելիքը):
Խեղագրութիւն. «Еду везу еду¹¹»:
Անհասկանալի բան. հասցէատէրը երկար մտածելուց յետոյ հեռագիրն աղբամանը նետեց:

6. Իմաստը. «Надо умѣть не только изучать архивы, но и правильно вести ихъ» (Պէտք է ոչ միայն գիտենալ՝ ինչպէս ուսումնասիրել արխիւները, այլեւ դրանք ճիշտ տնօրինել):

Ուղղագրութիւն. «Курсы по архивовѣдѣнію и архивоведенію» (Արխիւագիտութեան եւ արխիւավարութեան դասընթացներ):

Խեղագրութիւն. «Курсы по архивоведению и архивоведению»:

Անիմաստ բան. այդ ո՛ր են ուզում տանել բոլոր արխիւները:

7. Իմաստը. «До звѣзды не полагается ѣсть, а один грѣшный человекъ съѣлъ гречневый хлѣбецъ» (Մինչեւ մայրամուտ չի կարելի ուտել, սակայն մի մեղավոր մարդ հնդկացորենի հաց ճաշակեց մի կտոր):

Ուղղագրութիւն. «Одинъ грѣшникъ не удержался и отвѣдал грѣшничка» (Մի մեղսագործ չդիմացաւ եւ մի կտոր հնդկացորենի հաց կերաւ):

Խեղագրութիւն. «Один грѣшник не удержался и отведал грѣшничка»:

Անմտութիւն. մի կտոր հացը մի կտոր հաց կերա՛ւ, կամ մեղավոր մարդը տրուեց մարդակերութեան:

8. Իմաստը. «Есть ирраціональные пути, ведущіе къ воспріятію Бога» (Առ Աստուած տանող վերբանական ուղիներ կան):

Ուղղագրութիւն. «Богъ познается въ вѣдѣніи и въ невѣдѣніи» (Աստուած ճանաչում է գիտութեամբ եւ ոչ գիտութեամբ):

Խեղագրութիւն. «Богъ познается в ведении и в неведении»:

Անիմաստ բան. հեթանոսական շաստուածը (փոքրատառով) մերթ առաջնորդում է, մերթ՝ ոչ, եւ ըստ այդմ էլ՝ ճանաչում:

¹¹ «Ѣздить»՝ երթեկեկել, ճանապարհ ընկնել, «еда»՝ ուտելիք:

9. Իմաստը. «Я не могу указать точно время этого событія, это было когда-то давно» (Ես չեմ կարող ճիշտ նշել այդ իրադարձութեան ժամանակը, բայց դա եղել է վաղուց):

Ուղղագրութիւն. «Ասա՛, թէ երբ է դա տեղի ունեցել»: «Отстань, нѣкогда» (Զե՛ռք քաշիր, երբեմն):

Խեղագրութիւն. «Отстань, некогда» (Զե՛ռք քաշիր, ժամանակ չունեմ):

Անիմաստ բան. ես ժամանակ չունեմ, որ պատասխանեմ այդ հարցին:

10. Իմաստը. «Выплакавшись, наверху на лѣстницѣ, онъ уже не плакаль, когда спустился внизъ» (Վերելում՝ աստիճանների վրայ, մի կուշտ լացելուց յետոյ նա ցած իջաւ, բայց արդէն չէր լացում):

Ուղղագրութիւն. «Онъ слѣзъ ко мнѣ уже безъ слезъ» (Նա ինձ մօտ իջաւ, բայց արդէն առանց արցունքների):

Խեղագրութիւն. «Он слез сюда уже без слез»:

Անհեթեթութիւն. [«Ե» տառի փոխարէն «Ե»-ի դէպքում] ստացում է՝ արցունքներ այստեղ՝ անիմաստ բան, իսկ արցունքներ առանց արցունքների դէպքում՝ աներեւակայելի բան:

11. Իմաստը. «У насъ имѣется еще продовольствіе...» (Մենք դեռ պարէնամթերք ունենք):

Ուղղագրութիւն. «Пока у насъ еще есть, что ѣсть» (Մենք դեռ ուտելու բան ունենք):

Խեղագրութիւն. «Пока еще у насъ есть, что есть»:

Անիմաստ բան. մենք ունենք այն, ինչ կայ:

12. Իմաստը. «Человѣкъ съ горя напился, явно предпочитая шампанское» (Մարդը վշտից հարբեց՝ հաստատ գերադասելով շամպայնը):

Ուղղագրութիւն. «И утѣшеніе нашель я въ этой пѣнѣ упоительной» (Եւ սփոփանք գտայ ես այս արբեցուցիչ փրփուրի մէջ¹²):

Խեղագրութիւն. «И утешение нашел я в этой пене упоительной» (Եւ սփոփանք գտայ ես այդ արբեցուցիչ տոյժի մէջ):

Յիմարութիւն. «Пеня» նշանակում է կշտամբանք, տոյժ ու տուգանք, ինչպէս կարելի է միսիթարուել արբեցուցիչ տոյժով:

13. Իմաստը. «Въ революціи хуже всего эта всеобщая ненависть и ограбленіе» (Յեղափոխութեան մէջ ամենայո՞ւրի՝¹³ բաները համատարած ատելութիւնն ու թալանն են):

¹² Пѣна — փրփուր:

¹³ Այստեղի յայտ եկաւ մեր խեղագրութեան խոցը. յոռի— Գէշ, վատքաւ, վատ, վնասակաւ... հոռի—չայոց տումարի բ. ամիսը:

Ուղղագրութիւն. «Если бы не всё ненавидѣли, если бы не все отняли, а то всё и все» (Եթէ ոչ բոլորը ատէին, եթէ ամեն ինչ չխլէին, բայց արի ու տես, որ բոլորն են ատում եւ ամեն ինչ խլում):

Խեղագրութիւն. «Если бы не все ненавидели, если бы не все отняли, а то все и все» (Եթէ ամեն ինչ չատէին, եթէ ամեն ինչ չխլէին, բայց արի ու տես՝ ամեն ինչ եւ ամենքը):

Անհեթեթ բան. ատող անձանց (ենթակայ) կազմը փոխարինուած է ատելի առարկաների (խնդիրներ) կազմով, իսկ վերջին խօսքերը՝ «ամեն ինչ եւ ամեն ինչ», պարզապէս անիմաստ են:

Սակայն այդ ամենն աստ յիշատակելն անհնար է¹⁴:

300 տարի է, ինչ Ռուսիայում պայքար է մղում յանուն «Է» տառի: Մենք կշարունակենք այս պայքարը: 1648 թ. Մոսկուայում, եկեղեցական իշխանութեան օրհնութեամբ, քերականութեան ձեռնարկ լոյս տեսաւ, որի առաջաբանում ապացուցուեց, որ «Նախեառաջ իրենք՝ ուսուցիչները, պիտի տարբերեն «յած»-ը «եած»-ից¹⁵ եւ մէկը միւսի փոխարէն չգրեն», եւ որ «քերականական իմաստասիրութիւնը լուսաւորում է մեր սրտերի ըմբռնողութիւնը», եւ որ առանց դրա «գիտութիւն փնտրողը ոչինչի էլ չի հասնի», եւ որ քերականութիւնը «ամենայն բարեպաշտութեան անվտանգ առաջնորդողն է, վայելուչ հայեցողութեան եւ զարմանահրաշ ու անմատչելի աստուածաբանութեան, երանելի եւ ազնուագոյն փիլիսոփայութեան բացայայտման, ամեն տեսակի հասկացողութեան առաջնորդը» (տե՛ս Կլիւշեւսկիյ. «Ակնարկներ եւ ճառեր»¹⁶):

Քերականութեան նկատմամբ որդեգրուած այս իմաստուն մօտեցումը բացատրում է նրանով, որ Ֆորմալիստական-վերացական բանասիրութիւնը¹⁷, որն անտեսում է լեզուի մէջ գլխաւորը՝ կենդանի իմաստը, այդժամ դեռ չէր ձեւաւորուել եւ չէր հասցրել քայքայել ու սպանել խօսքի մշակոյթը: Այդ ժամանակներից ի վեր այդ այլանդակու-

¹⁴ Մենք այս, ինչպէս նաեւ յաջորդ ոչ մեծ պարբերութիւնները բաց թողեցինք, քանզի հեղինակն ընթերցողին առաջարկում է սեփական ուժերով գլուխ հանել մի շարք բնորոշ օրինակներից՝ ի հարկէ անդրադառնալով նաեւ նախայեղափոխական ուղղագրութեան մի քանի կանոնների բացատրութեանը:

¹⁵ Ռուսական այբուբենի «Ե» («ե») տառը՝ есть (ես) անուամբ:

¹⁶ Ключевский, «Очерки и рѣчи».

¹⁷ «Ֆորմալիստական» լեզուաբանութեան մէջ կոչուել է այն ուղղութիւնը, որի հետեւորդները լեզուական երեւոյթների գնահատման հարցում առաջնութիւնը տուել են ձեւին: Այս ուղղութիւնը զարգացաւ Ռուսաստանում, իսկ Հայաստանում այդ դպրոցի ներկայացուցիչն է եղել Մ. Աբեղեանը:

թիւնն ու չարիքը նուաճեցին լեզուի գիտութիւնը (ինչպէս նաեւ՝ միւս գիտութիւնները), որի հետեւանքով առարկայական իմաստի նկատմամբ հետաքրքրութիւնը իր տեղը զիջեց զուտ պատմական նկատառումներին (ինչպէս, օրինակ, Յ. Գրոտի դէպքում) եւ ամբոխավարական (ակադեմիական) նկատառումներին, ինչպէս նոր խեղազրութեան կազմողների պարագային:

Դրանից տուժեց եւ տուժում է ողջ ռուս մշակոյթը: Ահաւասիկ մի շարք ապացոյցներ:

Աղօթք. «Горе¹⁸ имеем сердца» (մեր սրտերը վիշտ ունեն) (փոխանակ горѣ՝ դէպի վեր, դէպի բարձունք, առ Աստուած): «Мир мирови твоему даруй» (խաղաղութիւնը Քո աշխարհին պարգեւիր): «О мире всего мира» (Ողջ աշխարհի խաղաղութեան համար): «Да празднует же мир, видимый же весь и невидимый» (Եւ թող ողջ տեսանելի եւ անտեսանելի աշխարհը տօնախմբի):

Աստուածաբանութիւն. «Я пришел не судить мир, но спасти мир» (Զեկայ, որ աշխարհը դատապարտեմ, այլ՝ որպէսզի փրկեմ աշխարհը) (Յովհ. ԺԲ. 47): Իսահակ Ասորի. «Աշխարհ եմ անուանում կրքերը, որոնք մտքի սաւառնումի ծնունդն են»: «Մահուան շուրջ խոկումն աշխարհի հանդէպ քամահրանք է առաջացնում» (անդ): «Всеведение Божие» (Աստծոյ ամենագիտութիւնը): Բարսեղ Մեծ. «Աշխարհը գեղարուեստական ստեղծագործութիւն է»¹⁹:

Փիլիսոփայութիւն. Աշխարհի, տիեզերքի, աշխարհայեացքի, մանրաշխարհի (microcosm) եւ համատիեզերքի (Macrocosm), գիտելիքի եւ իմաստութեան բոլոր խնդիրները եւ դրանց առընչուող բազում բաներ իմաստազրկուել ու վերացել են: Այսուհետ անհնար է որեւէ փիլիսոփայի գրագիտօրէն թարգմանել ռուսերէն: Խօսքի թեւերից զրկուել են բարոյագիտութիւնը, գոյաբանութիւնը, տիեզերաբանութիւնը, մարդաբանութիւնը:

Գիտութիւն. «Они все плодятся» (всѣ-х՝ բոլորի փոխարէն): «В России много рек» (рѣкъ-хի փոխարէն) (Ռուսիայում շատ գետեր կան): «От сырости возникает прение» (прѣнiе-хի փոխարէն). Ո՞վ է ում հետ վիճում խոնաւութեան պատճառով: «Он мог собрать вена» (вѣна-хի փոխարէն) (Նա չկարողացաւ երակ հաւաքել) (փոխանակ լինի պսակ): «Лечу вены по

¹⁸ Горе — թախիծ, դժբախտութիւն, ցաւ, դառնութիւն, եւն:

¹⁹ Նոր ուղղագրութեամբ բերուած այս բառերը կարող են հասկացուել նաեւ այլ իմաստով:

венскому способу» (լեփչու=բուժում եմ, *իսկ* лечу՝ թոշում եմ): «У вас опухла железа; в организме железа не хватает» (железа=գեղծ, железо=երկաթ):

Ռազմավարություն. «Сведение о сведении дивизий еще не поступило» (Զօրախմբերի ոչնչացման մասին տեղեկությունները դեռ չեն ստացուել). «Все на палубу» (всѣ-ի փոխարեն) (Ամեն ինչ տախտակամած հանել բոլորի փոխարեն): «Однородные вести редко приходят» (Հազուադէպ են միատեսակ լուրեր հասնում), «Откуда вести? Откуда вести?» (առաջին դէպքում՝ «Որտեղի՞ց են լուրերը», երկրորդում՝ «Որտեղի՞ց տանել»): «Это не подлежит вашему ведению» (Դա ենթակայ չէ ձեր իրաւասութեանը) (ведение=տանելը, վարելը, вѣдѣние=տնօրինություն, տեսչություն, իշխանություն, իրաւասություն):

Քաղաքականություն. Կոմունիստական սղագրություններից. Տրոցկին XI համագումարում յայտարարեց. «В Западной Европе, если победит ее пролетариат» (ея-ի փոխարեն) (եթէ Արեւմտեան Եւրոպայում յաղթի նրան պրոլետարիատը): Զինովեւր՝ անդ. «Международный рабочий класс осел» (осѣль-ի փոխարեն) (Միջազգային բանուոր դասակարգն աւանակ է): XIV համագումարից. «Не все еще понимают и не все еще верят» (всѣ-ի փոխարեն) (Ամեն ինչ չէ, որ հասկանում են եւ ամեն ինչի չէ, որ հաւատում են): Անդ՝ Գուաեւի ելոյթից. «Будем ставить точки над «и» (і-ի փոխարեն)²⁰ (Կէտ պիտի դնենք «и»-ի վրայ): XV համագումարում Կուրսկու ելոյթից. «Работа по статистике должна быть поставлена у нас на «ѣ» (Մեզանում վիճակագրութեան բարելավմանն ուղղուած աշխատանքները պէտք է գերազանց կատարուեն)²¹: Զայներ տեղից. «Читали все» (всѣ-ի փոխարեն) (Ամեն ինչ կարդացել են): «Наша цѣль — завоевать мир» (міръ-ի փոխարեն) (Մեր նպատակը խաղաղութիւնը նուաճելն է): ՌՍՖՍՀ սահմանադրութեան 3-րդ յօդուածը. «К ведению органов» (вѣдѣніе-ի՝ ի գիտութիւն-ի փոխարեն) (Մարմինների տանելը): «Новое Русское слово» թերթից, 12.1.1942. «Мы — все. Наш верховный главнокомандующий, президент Рузвельт, может быть уверен, что за ним идем мы все!» (всѣ-ի փոխարեն) (Մենք ամեն ինչ ենք: Մեր գերագոյն—գլխաւոր հրամանատար նախագահ Ռուզուելտը կարող է վստահ լինել, որ մենք ամեն ինչում հետեւում ենք իրեն):

²⁰ Այբուբենից դուրս մղուած «і» («ի») տառի վրայ կէտը դնելը փոխաբերական իմաստով այսօր էլ նշանակում է ասելու տեղ չթողնել, տրամաբանական վախճանին հասցնել, ճշտել, ոչ մի թերասած բան չթողնել:

²¹ На ять — Փոխաբերական իմաստով՝ ինչպէս հարկն է, լաւ:

Իմաստագրկուած ոռուսական առածներ. «У богатого мужика — все в долгу (ԵԲԵ-ի փոխարէն), у богатого барина — все в долгу» (Հարուստ գիւղացուն բոլորն են պարտք, հարուստ կալուածատէրն ամեն ինչ է պարտք): «Лес лесом, а бес бесом» (ԼԵՏԵ-ի եւ ԵԲԵ-ի փոխարէն) (Անտառը անտառ է, աշխն է՝ աշխ. ասուում է նմանութեան եւ տարբերութեան դէպքում): «Сперва дележ, а после телеш» (Բաժանելը [վէճի հետեւանքով] մերկ մնալուց լաւ է. ասուում է ժառանգութեան համար վէճ ու կռուի պարագայում): «Какая же честь, если нечего есть» (Էլ ինչ պատիւ, թէ ուտելու բան չկայ): «На мир беда, а воеводе нажиток» (Աշխարհին փորձանք, իսկ զօրավարին՝ վաստակ): «И глух и нем, греха не вем» (Եւ խուլ եմ, եւ համր, մեղքից էլ հեռու): «Перед судом все равны, все без откуда виноваты» (Դատարանի առջեւ բոլորն են հաւասար, առանց փրկագնի բոլորն էլ մեղաւոր են): «Мир на дело сошелся — виноватого опить» (Մարդիկ համաձայնութեան գալիս մեղաւորի հաշուին են խմում. ասուում է արդարութեան տեղը զբաղեցրած յոռի սովորութեան մասին): «Вор попал, а мир пропал» (Դողը բռնուեց, սակայն աշխարհը տուժեց. ասուում է, երբ մէկի մեղքի պատճառով բոլորն են տուժում): «Дошел тать в цель, ведут его на рель» (Աւազակը վաղ թէ ուշ կախաղան կը հանուի): «Ищи на казне, что на орле, на правом крыле» (Փնտրի՛ր մետաղադրամի վրայի արծուի աջ թեւին. ասուում է ինչ-որ բան գտնելու անհնարինութեան դէպքում): «Очи ушей вернее» (Տեսածը լսածից յուսալի է): «Кто в море не тонул, да детей не рожал, тот от сердца Богу не маливался» (Ով ծովում խեղդուելիս չի եղել, երեխա չի ունեցել, այդպիսին Աստծուն ի սրտէ չի աղօթել):

Աղաւաղուած ոռու դասականներ. Անհետեթ եւ աշխարհին (միր) եւ տիեզերքին (միւրոզдание) ձօնուած բոլոր բանաստեղծութիւնները, անհնար է դրանք հաշուել: Ահա մի քանի նմուշ.

Պուշկին. «И мощная рука к нему с дарами мира — Не простирается из-за пределов мира» (Եւ զօրեղ բազուկը խաղաղութեան ընծաներով չի կարկառուում դէպի նա (պէտք է ընթերցուի՝ աշխարհի) ծագերից):

Լերմոնտով. «Но я без страха жду довременный конец — Давно пора мне мир увидеть новый» (Բայց առանց վախի վաղաժամ աւարտին եմ սպասում. վաղուց է եկել նոր խաղաղութիւնը (պէտք է ընթերցել աշխարհը) աչքովս տեսնելու ժամանակը: Տիւտչեւ. «Есть некий час всемирного молчанья» (պէտք է ընթերցել՝ Համաշխարհային լռութեան ինչ-որ մի ժամ գոյութիւն ունի): «На мир таинственный духов» (Դէպ հոգիների խորհր-

դաւոր աշխարհ): «С миром дремлющим смешай» (Նիրհող աշխարհի հետ խառնիր): «Счастлив, кто посетил сей мир» (Երջանիկ է նա, որ այցելել է աշխարհն այս):

Դոկտոր Բարատինսկի. «Твой мир, увы, могилы мир печальный» (Քո աշխարհը, աւա՛ղ, գերեզմանի տխուր աշխարհն է)... «На что вы, дни! Юдольный мир явления — Свои не изменит! Все ведомы, и только повторенья — Грядущее сулит» (Զո՛ւր էք դուք, օրե՛ր. Աշխարհն աստուոր իր երեւոյթները չի փոխի. Բոլորը գիտեն՝ Գալիքը միայն կրկնութիւններ է խոստանում):

Մի քանի այլ աղաւաղումներ եւս. *Խօսելով* «младыхъ дѣвахъ»-ի մասին՝ Պուշկինը դրանց յանգերը յարմարեցնում է «странѣ» եւ «онѣ»-ին, իսկ խեղագրութեան մէջ այս յանգը կորչում է («они»՝ նրանք՝ «онѣ»-ի փոխարէն): «Ее ланиты оживлялись» (ея-ի փոխարէն) (Նրա այտերը կենդանանում էին): «Ее ничтожность разумею» (ея-ի փոխարէն) (Նրա ոչնչութիւն լինելը հասկանում եմ): Տիւտչեւը յանգաւորում է «ея»-ով եւ «я»-ով. «Исторглося из груди ее — И новый мир увидел я» (Նրա կրծքից ժայթքեց՝ եւ մի նոր աշխարհ տեսայ ես): Երազանքների մասին. «Пускай в душевной глубине — И всходят и зайдут они» (Թող հոգու խորին պարունակներում ծագեն ու մայր մտնեն դրանք): Մէյի մի ամբողջ բանաստեղծութիւն է վերանում՝ Վիկտոր Հիւգոյից ազդուած եւ Ռախմանինովին մի չքնաղ ողբ-մանս ստեղծելու ներշնչած. «Опросили они (мужчины)... онѣ отвѣчали» (Տղամարդկանց տարակուսանքը փարատող կանացի իմաստութիւնը): Իսկ ըստ խեղագրութեան՝ «նրանք» (տղամարդիկ) հարցնում են եւ «նրանք» էլ պատասխանում:

Պուշկինն ասում է. «Все говорят нет правды на земле» (Բոլորն ասում են, թէ արդարութիւն չկայ աշխարհում): «Делибаш уже на пике» (пике-ն իւրայատուկ բամբակէ գործուածք է՝ пикѣ-ի՝ սրածայր լեռան փոխարէն): Ի. Դմիտրեւին հասցէագրուած Գոգոլի նամակից. «В дороге занимало меня только небо, которое по мере приближения к югу, становилось синее и синее» (синѣе-ի փոխարէն) (Ճանապարհին ինձ միայն երկինքն էր զբաղեցնում, որը հարաւին մօտենալիս աւելի ու աւելի կապոյտ էր դառնում): Գոգոլը Եազիկովին գրում է. «Отныне взор твой должен бить светло и бодро вознесен горе»²² (горѣ-ի փոխարէն) (Այսուհետեւ քո հայեացքը պայծառ պիտի լի-

²² Ռուսերէնում играть «в» նախդիրով նշանակում է խաղալ ինչ-որ խաղ:

նի եւ կայտառ դէպ վեր պիտի նայի): «Немки... все, сколько ни есть, вяжут чулок» (Անխտիր բոլոր գերմանուհիները գուլպայ են գործում): «В пище есть побольше мясного» (շփոթում են էսթ-ի լինելն ու ուտելը) (Անունդն ընդունելիս աւելի շատ մսեղէն է ուտում—Մննդակարգում աւելի շատ մսեն էն կայ): «Благословенный воздух ее уже дохнул» (ея-ի շփոթում են եե-ի հետ) (Նա արդէն շնչել էր նրա օրհնեալ օդը): «Причина... вне... нашего ведения»... (Պատճառը մեր իրաւասութիւնից դուրս է)... Դոստոեւսկի. «Думал.... вернуться, но удержался от неведения» (невѣдѣнія-ի փոխարէն) (Մտածում էր վերադառնալ, բայց մնաց տեղում տեղեկութիւն չունենալու պատճառով): Մուսորգսկի. «Горе вознестися» (горѣ-ի փոխարէն) (Դէպի վեր բարձրանալ): Լեսկով. «А козочку подоил и ее молочком начал дитя питать» (Այծին կթեցի եւ սկսեցի նրա կաթով երեխային սնուցել): Բալմոնտ. «Ты легкая волна, играющая в море» (Գործողութեան տեղը մատնանշելու փոխարէն, ցոյց է տրւում առարկայ. «Դու, որ ծով ես խաղում», նոյն ձեւի, ինչպես, ասենք, քարկտիկ ես խաղում, ճատրակ ես խաղում, ծով ես խաղում). պէտք է լինի. Ո՛վ դու, ծովում խաղացող թեթեւ լիբ: Այլագովսկին իր նկարն անուանել է «На морѣ» (որտեղ—ծովում), խեղագրութեամբ դարձել է «На море» (դէպի ուր) (դէպի ծով):

Այս ամենին հարկ է յաւելել այն, որ խեղագրութիւնն աղճատում եւ վիժեցնում է այն արժէքաւոր ներքին ջանքը, որը մեզանից ամեն մէկը գործադրում է բառարմատներն ընկալելու համար: Կարդալով «вѣщій» (տեսանող) բառը՝ իմաստային զուգորդմամբ այն կապակցում ենք «вѣщунья» (գուշակ), «вѣдѣти» (գիտենալ, իմանալ), «вѣдѣніе» (գիտելիք, ճանաչողութիւն), բայց կարդալով «вещий» իմաստով՝ այն կառնչակցենք «вещь» (իր, առարկայ, բան) «вещественный», (առարկայական) բառին, ինչն անհեթեթութիւն է: Բնչ է նշանակում «вещий Олег»: Ոչինչ էլ չի նշանակում: «Пение» (երգեցողութիւն) բառը կարդալիս այն կզուգորդենք «пень» (կոճղ), «пеня» (տուգանք), «пенька» (կանեփաթել), «пеньтюхъ» (անշնորհք, յիմար մարդ) բառերին... «Намерение» (մտադրութիւն) բառի մերձաւորագոյն զուգորդումը «мерин»-ը (կապը կրտած ձի) կլինի, «присмирив»-ինը (խոնարհուելով), «ревъ»-ը (ռոնոց, մոնչիւն, բառաչիւն), «бессовестный»-ինը (անխիղճ) «бѣсъ»-ը (դէւ, այս) եւ «вести»-ին (տանել) կլինի, «беда»-ինը (շարիք, փորձանք) «бедуинъ»-ը (բեդուին), «бидонъ» (բիդոն), «бедламъ»-ը (հոգեբուժարան), «тело»-ինը (մարմին) «телокъ»-ը (հորթուկ, միամիտ պատանի), «телиться»-ն (հորթ ծնել), «поместье»-ինը՝

(կալուածֆ) «мести»-ն (ալել), «месть»-ը (վրէժ), բայց բնաւ ոչ «место»-ն (տեղ, վայր, ծառայութիւն), «левша»-ինը (ձախլիկ)՝ «левъ»-ը՝ (առիւծ), եւ «вошь»-ը՝ ոջիլ)...

Եւ այսպէս զուգորդումների բովանդակ աշխատանքի միջոցով, որով ապրում եւ որով կերտում է իւրաքանչիւր լեզու:

Ինչի՞ համար են այս բոլոր աղաւաղումները: Ինչի՞ համար է այս խելացնոր պարզեցումը: Ո՞ւմ է հարկաւոր մտքի եւ լեզուական շինարարութեան մէջ ներմուծուող այս խռովքը:

Պատասխանը կարող է միայն մէկը լինել. այս ամենը հարկաւոր է Ռուսիոյ ազգային թշնամիներին: Նրանց, հէնց նրանց եւ միմիայն նրանց:

Շարունակութիւնը յաջորդիւ

Թարգմանութիւր՝
ԳՐԻԳՈՐ ԴԱՐԲԻՆԵԱՆԻ

